# ԵՂԲԱՅՐ ԷԻՆՔ ՄԵՆՔ...

—

Եղբայր էինք մենք. եւ մի ժամանակ
Խըմբուած իրար հետ անբաժան սիրով
Մի հայրենական անշուք յարկի տակ՝
Գոհ էինք նոյն իսկ եւ ցամաք հացով:
Եւ հընչւում էին մեր ուրախ երգեր
Մեր տնակի շուրջն Արաքսի ափին,
Երբ գարնան արեւն իր ոսկի շողեր
Խըփում էր հեռու սարի կատարին.
Երբ դեռ վառւում էր մարգը ցօղալից
Ու մենք դաշտ էինք շտապում խըմբով,
Երբ ջրում էինք Աստուծու աշխարհից
Մեզ բաժին տուած արտը քըրտինքով.
Երբ շոգ կէսօրի արեւից այրուած
Հանգչում էինք մենք անոյշ ստուերում,
Երբ դառնում էինք ձեռք ձեռքի տուած
Ու մի յարկի տակ նորից բոլորում:
Եւ այդ սիրելի, քաղցր օթեւանում
Նոյն էին եւ մեր վշտերն ու հոգսեր,
Եղբայրն իր եղբօր ցաւովն էր տանջւում,
Նոյն արտասուքն էր թրջում մեր աչքեր:

—

Մեր դաշտ ու ձորում բացւում է նորից
Գարունը ահա իր արդ ու զարդով,
Նոյն անուշ հովն է փչում սարերից,
Նոյն կանաչ մարգերն են փայլում ցօղով:
Բայց տխուր եւ լուռ է մեր յարկի տակ,
Եւ նրա շուրջը չեն հնչւում երգեր,
Լոկ ես եմ շրջում այստեղ միայնակ
Ու մենակ քրքրում հին ու նոր ցաւեր:

*ԱՐՇ. ՄԽԻԹԱՐ*